**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 1 1**
**ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի**
**2017թ. դեկտեմբերի 27-ին կայացած նիստի**

Նախագահությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի

Քարտուղարությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի

Մասնակցությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

**Օրակարգ՝**

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայում 2017 թվականին կատարված աշխատանքների ամփոփում:
   Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան
2. «Հանրային կառավարում» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի 2017 թվականի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվություն:
   Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան
3. 2017 թվականին քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ կատարված աշխատանքների քննարկում:
   Զեկուցող՝ Լրացուցիչ և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Խ.Բեզիրջյան
4. Ընթացիկ հարց: Հայ-Ռուսական համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ Լիլյա Իգորի Սիմոնյանի և Հայկ Արթուրի Ծատուրյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:
   Զեկուցող՝ Գիտական քարտուղար Հ.Ստեփանյան
5. Ընթացիկ հարց: ՀՀ ՊԿԱ իրավագիտության ամբիոնի ասպիրանտներ Վահե Աշոտի Քիշմիրյանի և Վիրաբ Ալբերտի Վարդանյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:
   Զեկուցող՝ Իրավագիտության ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան
6. Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի հայցորդ Աննա Դավիթի Առուստամյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:
   Զեկուցող՝ Կառավարման ամբիոնի վարիչ Գ.Գասպարյան
7. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի՝ («Հումանիտար հետազոտությունների կենտրոն» («Կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա», «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն» և «Գիտության կառավարման հետազոտական կենտրոն» ծրագրեր)) 2017 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվությունն ընդունելու մասին:
   Զեկուցող՝ ռեկտոր, ծրագրերի ղեկավարներ
8. Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող (Ծածկագիր 15T-5A297) «Կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգություն» գիտական թեմայի 11.12.2015թ.-10.12.2017թ. ժամանակահատվածն ընդգրկող ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին:
   Զեկուցող՝ ծրագրի ղեկավար Լ. Պետրոսյան
9. Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող (Ծածկագիր 15T-5E025) «Հանրային ծառայության գործունեության և նրա տեսակների իրավահամեմատական վերլուծություն»

գիտական թեմայի 11.12.2015թ.-10.12.2017թ. ժամանակահատվածն ընդգրկող ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին:

Զեկուցող՝ ծրագրի ղեկավար Ա.Եզեկյան

10. Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող (Ծածկագիր 15T-5I207) «Հայ-իրանական հարաբերությունների հեռանկարներն ու մարտահրավերները Իրան-Արևմուտք հարաբերությունների կարգավորման համատեքստում» գիտական թեմայի 11.12.2015թ.-10.12.2017թ. ժամանակահատվածն ընդգրկող ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին:

Զեկոուցող՝ ծրագրի ղեկավար Ս.Սարուխանյան

**1.Լսեցին** ՀՀ պետական կառավարման ակադեմիայում 2017 թվականին կատարված աշխատանքների ամփոփման հարցը:

Զեկուցող` ռեկտոր Ա.Լոքյան

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Մ. Մարգարյանը, Գ. Գսպոյանը:

**Որոշեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայում 2017 թվականին կատարված աշխատանքները գնահատել լավ:

**2.Լսեցին՝** «Հանրային կառավարում» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի 2017 թվականի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվություն:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Գ. Չատինյանը:

**Որոշեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի 2017 թվականի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվությունն ընդունել ի գիտություն (հաշվետվությունը կից ներկայացվում է):

**3.Լսեցին՝** 2017 թվականին քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ կատարված աշխատանքների քննարկում

Զեկուցող՝ Լրացուցիչ և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Խ.Բեզիրջյան

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Խ. Բեզիրջյանը:

**Որոշեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայում 2017 թվականին քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ կատարված աշխատանքները գնահատել լավ:

**4.Լսեցին՝** Ընթացիկ հարց: Հայ-Ռուսական համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտներ Լիլյա Իգորի Սիմոնյանի և Հայկ Արթուրի Ծատուրյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:

Զեկուցող՝ Գիտական քարտուղար Հ.Ստեփանյան

Զեկուցողը նշեց, որ Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի խորհրդի 23.11.2017թ. նիստում քննարկել է ամբիոնի ասպիրանտներ Լիլյա Իգորի Սիմոնյանի և Հայկ Արթուրի Ծատուրյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը և խորհրդի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են ՀՀ ՊԿԱ գիտական խորհրդին՝

1. Հայ-Ռուսական համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ Լիլյա Իգորի Սիմոնյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Մարդու և քաղաքացու սոցիալ-տնտեսական իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ՝ ԺԲ. 00.02-

Հանրային իրավունք մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Աշոտ Հայկի Խաչատրյանին:

2. Հայ-Ռուսական համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ Հայկ Արթուրի Ծատուրյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Խորհրդարանի սահմանադրական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ՝ ԺԲ. 00.02-Հանրային իրավունք մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավագիտության թեկնածու, պրոֆեսոր՝ Ֆելիքս Պապիկի Թոխյանին:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Ա. Եզեկյանը, Հ. Ստեփանյանը:

**Որոշեցին՝**

1. Հայ-Ռուսական համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ Լիլյա Իգորի Սիմոնյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Մարդու և քաղաքացու սոցիալ-տնտեսական իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ՝ ԺԲ. 00.02-Հանրային իրավունք մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Աշոտ Հայկի Խաչատրյանին:

2. Հայ-Ռուսական համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ Հայկ Արթուրի Ծատուրյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Խորհրդարանի սահմանադրական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ՝ ԺԲ. 00.02-Հանրային իրավունք մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավագիտության թեկնածու, պրոֆեսոր՝ Ֆելիքս Պապիկի Թոխյանին:

**5.Լսեցին՝** Ընթացիկ հարց: ՀՀ ՊԿԱ իրավագիտության ամբիոնի ասպիրանտներ Վահե Աշոտի Քիշմիրյանի և Վիրաբ Ալբերտի Վարդանյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը

Զեկուցող՝ Իրավագիտության ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

Զեկուցողը նշեց, որ Իրավագիտության ամբիոնում 22.12.2017թ. կայացած նիստում քննարկվել է ամբիոնի ամբիոնի ասպիրանտներ Վահե Աշոտի Քիշմիրյանի և Վիրաբ Ալբերտի Վարդանյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը և ամբիոնի նիստում կայացրածորոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին՝

1.Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ Վահե Աշոտի Քիշմիրյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հայաստանի Հանրապետության նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները» վերտառությամբ՝ ԺԲ.00.02-Հանրային իրավունք մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Վահե Վարդանի Ստեփանյանի:

2.Ի րավագիտության ամբիոնի ասպիրանտ Վիրաբ Ալբերտի Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրականացման հիմնախնդիրները սահմանադրական նոր կարգավորումների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02-Հանրային իրավունք մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Աշոտ Հայկի Խաչատրյանին:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Հ. Ստեփանյանը:

**Որոշեցին՝**

1.Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ Վահե Աշոտի Քիշմիրյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հայաստանի Հանրապետության նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները» վերտառությամբ՝ ԺԲ.00.02-Հանրային իրավունք մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավագիտության դոկտոր,պրոֆեսոր՝ Վահե Վարդանի Ստեփանյանին:

2.Ի րավագիտության ամբիոնի ասպիրանտ Վիրաբ Ալբերտի Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրականացման հիմնախնդիրները սահմանադրական նոր կարգավորումների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02-Հանրային իրավունք մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Աշոտ Հայկի Խաչատրյանին:

**6.Լսեցին՝** Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման ամբիոնի հայցորդ Աննա Դավիթի Առուստամյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

Զեկուցող՝ Կառավարման ամբիոնի վարիչ Գ.Գասպոյան

Զեկուցողը նշեց, որ Կառավարման ամբիոնում 27.11.2017թ. կայացած նիստում քննարկվել է ամբիոնի հայցորդ Աննա Դավիթի Առուստամյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին՝ Աննա Դավիթի Առուստամյանի «Զբոսաշրջության ոլորտի մրցունակության բարձրացման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել «Կրթության որակի բարելավման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների հանրակրթական ուսումնական հաստատություններում» վերտառությամբ:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Գ. Գասպոյանը, Թ. Խեչոյանը:

**Որոշեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման ամբիոնի հայցորդ Աննա Դավիթի Առուստամյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել «Կրթության որակի բարելավման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների հանրակրթական ուսումնական հաստատություններում» վերտառությամբ:

**7.Լսեցին՝** Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի՝ («Հումանիտար հետազոտությունների կենտրոն» («Կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա», «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն» և «Գիտության կառավարման հետազոտական կենտրոն» ծրագրեր)) 2017 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվությունն ընդունելու մասին:

Զեկուցող՝ ռեկտոր, ծրագրերի ղեկավարներ

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Խ.Բեգիրջյանը, Գ. Հովհաննիսյանը:

**Որոշեցին՝** Ընդունել Ակադեմիայում իրականացվող Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի՝ («Հումանիտար հետազոտությունների կենտրոն» («Կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա», «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն» և «Գիտության կառավարման հետազոտական կենտրոն» ծրագրեր)) 2017 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվությունը (կից ներկայացվում է):

**8.Լսեցին՝** Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող (Ծածկագիր 15T-5A297) «Կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգություն» գիտական թեմայի 11.12.2015թ.-10.12.2017թ. ժամանակահատվածն ընդգրկող ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին:

Զեկուցող՝ ծրագրի ղեկավար Լ. Պետրոսյան

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Ռ. Աղուզումցյանը:

**Որոշեցին՝** Ընդունել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող (Ծածկագիր 15T-5A297) «Կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգություն» գիտական թեմայի 11.12.2015թ.-10.12.2017թ. ժամանակահատվածն ընդգրկող ամփոփիչ հաշվետվությունը (կից ներկայացվում է):

**9.Լսեցին՝** Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող (Ծածկագիր 15T-5E025) «Հանրային ծառայության գործունեության և նրա տեսակների իրավահամեմատական վերլուծություն» գիտական թեմայի 11.12.2015թ.-10.12.2017թ. ժամանակահատվածն ընդգրկող ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին:

Զեկուցող՝ ծրագրի ղեկավար Ա.Եզեկյան

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Խ.Բեզիրջյանը, Հ. Ստեփանյանը:

**Որոշեցին՝** Ընդունել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող (Ծածկագիր 15T-5E025) «Հանրային ծառայության գործունեության և նրա տեսակների իրավահամեմատական վերլուծություն» գիտական թեմայի 11.12.2015թ.-10.12.2017թ. ժամանակահատվածն ընդգրկող ամփոփիչ հաշվետվությունը (կից ներկայացվում է):

**10.Լսեցին՝** Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող (Ծածկագիր 15T-5I207) «Հայ-իրանական հարաբերությունների հեռանկարներն ու մարտահրավերները Իրան-Արևմուտք հարաբերությունների կարգավորման համատեքստում» գիտական թեմայի 11.12.2015թ.-10.12.2017թ. ժամանակահատվածն ընդգրկող ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին:

Զեկուցող՝ ծրագրի ղեկավար Ս.Սարուխանյան

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Գ.Չատինյանը,Ա. Սարիբեկյանը:

**Որոշեցին՝** Ընդունել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող (Ծածկագիր 15T-5I207) «Հայ-իրանական հարաբերությունների հեռանկարներն ու մարտահրավերները Իրան-Արևմուտք հարաբերությունների կարգավորման համատեքստում» գիտական թեմայի 11.12.2015թ.-10.12.2017թ. ժամանակահատվածն ընդգրկող ամփոփիչ հաշվետվությունը (կից ներկայացվում է):

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝ Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝ Հ.Ստեփանյան

27 դեկտեմբերի 2017թ.

Կ.Տ.